



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ք. Երևան
2026թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	6
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	7
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	9
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....	10

Հիմնադրամի գտնվելու վայրը՝

ՀՀ, ք. Երևան 0037, Ուլնեցու 31

Իրավական ձևը՝

Հիմնադրամ

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Կազմակերպության գործունեության բնույթը
ներկայացված է Ծանոթագրություն 1-ում

Գործադիր տնօրեն՝

Սարգիս Բաղինյան

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (“ՀՏԶՀ” կամ “Հիմնադրամ”) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, գուտ ակտիվներում փոփոխությունների, և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում ՀՏԶՀ-ի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների խորհրդի (ԱՌՄՄԻ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք ՀՏԶՀ-ից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄ կանոնների:

Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

30 հունիսի, 2026թ.



Վահագն Մահակյան, FCCA

Տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2025 հազար դրամ	31.12.2024 հազար դրամ
ԱՎՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		171,438	122,822
Ստացվելիք ֆոնդեր	4	49,292,727	66,512,674
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		49,464,165	66,635,496
Ընթացիկ ակտիվներ			
Կանխավճարներ	5	10,785,936	13,031,992
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	4,364,266	6,502,884
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		15,150,202	19,534,876
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՎՏԻՎՆԵՐ		64,614,367	86,170,372
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Շնորհներ կառավարությունից	7	60,305,526	81,927,104
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		60,305,526	81,927,104
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	8	3,594,941	3,529,369
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		3,594,941	3,529,369
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		63,900,467	85,456,474
Զուտ Ակտիվներ			
Կուտակված հավելուրդ/(պակասուրդ)		713,899	713,899
Ընդամենը զուտ ակտիվներ		713,899	713,899
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱՎՏԻՎՆԵՐ			
ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		64,614,366	86,170,372

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-36) ստորագրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարության կողմից 2026թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Սարգիս Բաղինյան
 Գործադիր տնօրեն



Գարինե Շահբաղյան

Ֆինանսական կառավարման և
 հաշվապահական հաշվառման վարչության պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	2025	2024
		հազար դրամ	հազար դրամ
Ծրագրային ծախսեր	9	112,610,917	55,171,972
Եկամուտ շնորհներից	7	(112,610,917)	(55,171,972)
Այլ եկամուտ, զուտ		-	112,602
Օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերությունից, զուտ		-	(14,928)
Տարվա արդյունք մինչև հարկումը		-	97,674
Շահութահարկ		-	-
Տարվա արդյունք		-	97,674
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Տարվա համապարփակ արդյունք		-	97,674

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կուտակված հավելուրդ/(պակասուրդ) հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Առ 1 հունվարի 2024թ.	628,041	628,041
Տարվա արդյունք	97,674	97,674
Արտարժույթի փոխարժեքային ճշգրտում	(11,816)	(11,816)
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	713,899	713,899
Կուտակված հավելուրդ/(պակասուրդ)	-	-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	713,899	713,899

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2025	2024
	<u>հազար դրամ</u>	<u>հազար դրամ</u>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված/(վերադարձված) ֆոնդեր		
ՍԱԲԾ (SSIP)	3,321,996	406,231
ՍԱԲԾ ԼՖ (SSIP AF)	11,003,854	15,226,598
ԶՌՀԿ (IWRM)	2,205,502	1,575,666
ՏՏԵԶ (LEID)	19,587	6,105,076
ՈՀԱԾ (ISMP)	26,043	266,567
ՄՆՏԶ ԼՖ (SILD AF)	402,124	5,300,555
ՀԵԾ-II Փուլ 3 (CIP II-P3)	3,166,606	5,461,189
Վեդի (VEDI)	516,704	2,163,458
ԵԶԲԾ (YWIP)	1,159,984	2,602,046
ԱՄՆ ՄԶ (USAID)	-	-
ՄՆՏԶ (SILD)	-	-
ԱՄՆ ՄԶ (USAID)	(16,700)	302,241
IAADAM	62,770	-
Կառավարության նախագծեր	85,131,454	18,470,546
Այլ	-	85,978
	106,999,924	57,966,151
ՍԱԲԾ (SSIP)	(2,087,573)	(1,282,336)
ՍԱԲԾ ԼՖ (SSIP AF)	(12,059,164)	(12,948,155)
ԶՌՀԿ (IWRM)	(2,205,502)	(1,578,378)
ՏՏԵԶ (LEID)	(494,547)	(5,886,556)
ՈՀԱԾ (ISMP)	(312,406)	(1,406,316)
ՄՆՏԶ ԼՖ (SILD AF)	(1,026,493)	(5,106,707)
ՀԵԾ-II Փուլ 3 (CIP II-P3)	(3,519,595)	(5,196,891)
Վեդի (VEDI)	(425,984)	(2,075,625)
ԵԶԲԾ (YWIP)	(1,224,906)	(2,529,850)
ԱՄՆ ՄԶ (USAID)	-	-
ՄՆՏԶ (SILD)	-	-
ԱՄՆ ՄԶ (USAID)	(72,491)	(185,205)
IAADAM	(62,770)	-
Կառավարության նախագծեր	(85,817,887)	(17,992,818)
Այլ	(106,132)	(304,740)
	(109,415,450)	(56,493,577)
Այլ գործառնական դրամական միջոցների հոսքեր, զուտ	-	-
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	(2,415,526)	1,472,574
Փոխարժեքային տարբերություններ	276,907	(163,730)
Դրամական միջոցների զուտ հոսք	(2,138,619)	1,308,844
Դրամական միջոցների մնացորդը տարեկզբին	6,502,884	5,194,040
Դրամական միջոցների մնացորդը տարեվերջին	4,364,266	6,502,884

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

1.	Ընդհանուր տեղեկություններ.....	11
2.	Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ.....	14
3.	Ստացվելիք ֆոնդեր.....	24
5.	Կանխավճարներ.....	29
6.	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.....	30
7.	Դրամաշնորհներ կառավարությունից	31
8.	Կրեդիտորական պարտքեր.....	32
9.	Ծրագրային ծախսեր	33
10.	Հարկեր.....	36
11.	Դատական հայցեր.....	36
12.	ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ	36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Հիմնադրամը և գործունեությունը

Հայաստանի Տարածքային Ձարգացման Հիմնադրամը (ՀՏՁՀ-ը կամ Հիմնադրամ) Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի (ՀՄՆՀ) իրավահաջորդն է 2015թ.-ից սկսած: ՀՏՁՀ-ն 04.08.2015թ.-ից գործունեությունը շարունակում է նոր կանոնադրության հիման վրա՝ շարունակելով ՀՄՆՀ-ի բնականոն գործունեությունը:

ՀՄՆՀ-ն ստեղծվել է 11.04.2000թ. միակ հիմնադիր ՀՀ Կառավարության № 162 որոշման համաձայն՝ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքներում փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը և կենսամակարդակի բարելավմանը աջակցելու նպատակով: ՀՄՆՀ-ն գրանցվել է 2000թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ Արդարադատության նախարարության № 988 հրամանի համաձայն:

ՀՏՁՀ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0037, Ուլնեցու 31:

ՀՏՁՀ-ն իրականացնում է հետևյալ ծրագրերը՝

- բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- Աջակցել տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ, ֆինանսական և վարչական կարողությունների զարգացմանը, ներառյալ կառավարման բարեփոխումները և համայնքների համախմբումը,
- Խթանել տարածաշրջանային տնտեսական աճը և ներդրումները՝ խթանելով նպատակային ծրագրերը, զարգացնելով աճի կենտրոններ և ապահովելով պետական, դոնորական և մասնավոր ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Ծրագրերը ֆինանսավորվում են ՀՀ Կառավարության կողմից՝ հիմնականում միջազգային դոնորներից ստացված ֆոնդերի միջոցներով: Զարգացման Միջազգային Ընկերակցությունը (ՁՄԸ, IDA), Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը (ՎՁՄԲ, IBRD) և Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ, ADB) հանդիսանում են ամենախոշոր դոնորները, ինչպես նաև համաֆինասավորվել են ՀՀ Կառավարության, տեղական համայնքների ու այլ հովանավորների կողմից:

1.2 ՁՏԾԻԳ-ի միացում

Համաձայն ՀՀ կառավարության 28.02.2019թ. -ի N 170-Ն և 26.12.2019թ. -ի N 1966-N որոշումների, 2020թ. -ի սկզբից Հիմնադրամին է միացվել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՁՏԾԻԳ) գործունեությունը:

ՁՏԾԻԳ-ի նախկին գործունեությունը շարունակվում է իրականացվել ամբողջությամբ, այդ թվում իր աշխատակազմի և ռեսուրսների միջոցով, որոնք միացվել են ՀՏՁՀ-ին՝ մասնաճյուղի կարգավիճակով:

Համաձայն ՀՏՁՀ հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի օգոստոսի 25-ին կայացած նիստի արձանագրության՝ հաստատվել է ՀՏՁՀ նոր կառուցվածքը, և որոշում է կայացվել դադարեցնել ՀՏՁՀ «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» մասնաճյուղի գործունեությունը և հանձնարարվել ՀՏՁՀ-ին ջրային ոլորտի ծրագրերի իրականացումը:

Ջրային ոլորտի հիմնական գործունեության ուղղություններն են.

- Վեղու ջրամբարի և որոգման համակարգի կառուցումը,
- Ոռոգման համակարգերի արդիականացումը,
- Ախտորյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարումը,
- Երևանի ջրամատակարարման համակարգի բարելավումը,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

- «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագրի իրականացումը:

Զրային ոլորտի ծրագրերը ֆինանսավորվում են ՀՀ Կառավարության կողմից՝ հիմնականում միջազգային դոնորներից ստացված ֆոնդերի միջոցներով: Եվրասիական զարգացման բանկը (ԵԶԲ, EDB), Զարգացման ֆրանսիական գործակալությունը (ԶՖԳ, AFD), Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ, EIB), Վերակառուցման վարկերի բանկը (ՎՎԲ, KfW) հանդիսանում են ամենախոշոր դոնորները: Ծրագրերը համաֆինանսավորվել են ՀՀ Կառավարության և տեղական համայնքների կողմից:

1.3. Իրականացված ծրագրեր

31.12.2025թ.-ին ավարտվող տարում, ՀՏԶՀ-ն իրականացրել է հետևյալ հիմնական ծրագրերը.

- **ՄՆՏԶ ԼՖ (SILD AF)**– «Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման նախագծի լրացուցիչ ֆինանսավորում»՝ Հայաստանի Հանրապետության եւ IBRD-ի միջեւ 2020 թվականի ապրիլի 21-ի թիվ 9060-AM վարկային համաձայնագրի ֆինանսավորմամբ՝ 17,900,000 EUR գումարի չափով: Ծրագրի նպատակն է բարելավել համայնքային եւ միջհամայնքային ենթակառուցվածքների որակը, օգտագործումը և հասանելիությունը: Ծրագիրն ուժի մեջ է մտել 08.12.2020թ.-ին: Վարկի թիվ 9060-AM ֆինանսավորման փակման ամսաթիվը սահմանվում է 2025թ. մայիսի 31-ին:
- **ՍԱԲԾ (SSIP)** - «Մեյսմիկ անվտանգության բարելավման Ծրագիր», որը ֆինանսավորվում է ԱԶԲ-ի և ՀՀ-ի միջև 19.10.2015թ. կնքված ADB Loan Number 3284-ARM վարկային համաձայնագրով՝ 83,600,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է կառուցել երկրաշարժադիմացկուն դպրոցներ և բարելավել բնական աղետներին արձագանքումը: ՍԱԲԾ ծրագրի ավարտը սահմանված է 31.05.2026թ.-ը:
- **SSIP-AF** - «Մեյսմիկ Անվտանգության Բարելավման Ծրագիր-Լրացուցիչ ֆինանսավորում», որը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2023 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4351-ARM վարկային համաձայնագրի ֆինանսավորմամբ (լրացուցիչ ֆինանսավորում վարկային № 3284-ARM(SF))՝ 66,100,000 EUR գումարի չափով: Ծրագրի նպատակն է կառուցել սեյսմակայուն դպրոցներ: SSIP-AF ծրագրի փակման ամսաթիվը սահմանված է 2027 թվականի սեպտեմբերի 30-ը:
- **ՏՏԵԶ (LEID)** - «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» Ծրագիր, որը ֆինանսավորվում է ՎԶՄԲ-ի և ՀՀ-ի միջև 23.02.2016թ. կնքված IBRD Loan Number 8572-AM վարկային համաձայնագրով՝ 55,000,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է Հայաստանի ընտրված մարզերում (Կոտայք, Վայոց Ձոր, Սյունիք, Լոռի, Արմավիր, Արարատ) տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության ավելի մեծ մասնակցության համար ենթակառուցվածքային ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը: Մասնավորապես, Ծրագիրը աջակցում է բիզնես և ներդրումային միջավայրին՝ Փոքր և Միջին Ձեռնարկություններ (ՓՄՁ) ստեղծման, աճի, նորարարությունների համար: Ծրագիրն ուժի մեջ է մտել 29.12.2016թ.-ին: Ծրագրի հետ կապված աշխատանքները սկսվել են 21.04.2017թ.-ից: ՎԶՄԲ Վարկային համաձայնագիր 8572-AM վարկի ֆինանսավորման ավարտը սահմանված է 31.12.2024թ.-ը:
- **USAID** – «Տեղական կառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների» Ծրագիր, որը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) և ՀՀ Կառավարության միջև կնքված պայմանագրի՝ 7,980,000 USD գումարի չափով, որից ԱՄՆ ՄԶԳ կողմից 6,000,000 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ Կառավարության ներդրումը՝ 1,980,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի նպատակն է խոշորացված համայնքների, համայնքների ավագանիների և համայնքապետարանների կարևորագույն համակարգերի և կարողությունների զարգացումը: Ծրագրի մեկնարկել 2022թ. դեկտեմբերի 1-ին և նախատեսվում էր ավարտին հասցնել 2027թ. նոյեմբերի 30-ին: Ծրագիրը փաստացի ավարտվել 2025 թվականին՝ 2025 թվականի հունվարի 24-ի «Գործադիր հրամանագրի իրականացման վերաբերյալ ծանուցում. Միացյալ Նահանգների արտաքին օգնության վերազնահատում և վերակազմավորում» փաստաթղթի հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

- **ՈՀԱԾ (ISMP)** - Եվրասիական զարգացման բանկի (EDB) աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագիրն իրականացվում է 16.10.2015թ. ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 2016թ. հունիսի 10-ին: Ծրագրի նպատակն է Ոռոգման ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովում, այդ թվում մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով, մայր եվ երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում, ներտնտեսային ոռոգման ցանցերի վերականգնման և կառուցման աշխատանքներ, հիմնանորոգվող ցանցերի երկարությունը՝ 344,32 կմ, նոր կառուցվող ոռոգման ցանցերի երկարությունը՝ 67,18 կմ: Ծրագրի փական ամսաթիվը վերանայվել և երկարաձգվել է մինչև 30.06.2025թ.
- **Վեդի (VEDI)** - Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD) աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիրն իրականացվում է 26.01.2016թ. ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 2016թ. մայիսի 12-ին: Ծրագրի նպատակն է Վեդիի ջրամբարի/պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրառ հանգույցների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի, ինչպես նաև ջրամբարից ոռոգման ենթակա հողատարածքների ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցում, որի արդյունքում ակնկալվում է Վեդի և Խոսրով գետերի վրա ջրառի ջրաթափ կառույցը և ջրի փոխադրող համակարգի կառուցում՝ 10,6 կմ, ոռոգման համակարգի կառուցում՝ 36,2 կմ, ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում՝ 60 կմ և ջրամբարի պատվարի կառուցում՝ 80 մ: Ծրագրի փական ամսաթիվը վերանայվել և երկարաձգվել է մինչև 2028թ. մայիսի 31-ը:
- **ԶՌՀԿ (IWRM)** - Վերակառուցման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ իրականացվող «Զրային ռեսուրսների համալիր կառավարում (ԶՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 1 և 2» BMZ-No. 2014.67.950 և BMZ-No. 2012.66.956: Ծրագիրն իրականացվում է համապատասխանաբար 19.12.2014թ. և 18.12.2017թ. ստորագրված վարկային համաձայնագրերի շրջանակներում: Ծրագրի նպատակն է Կապսի ջրամբարի կառուցում, կառուցվող պատվարի բարձրություն - 33 մ: Ծրագրի փական և երկու վարկային միջոցների տրամադրման վերջնաժամկետը վերանայվել և երկարացվել է մինչև 30.12.2026թ.:
- **ՀԵԾ-II Փուլ 3 (CIP II-P3)** - «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» BMZ N 2013 66 343 ծրագիր: Ծրագրի նպատակն է 11 քաղաքների և 41 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ (մասնակի) վերականգնման աշխատանքների և 560 գյուղական բնակավայրերից ընտրված որոշ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների իրականացում: Իրականացվում է Վերակառուցման վարկերի բանկի աջակցությամբ 27.12.2013թ. կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 21.06.2014թ., Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ, որն ուժի մեջ է մտել 27.06.2014թ., ինչպես նաև Վերակառուցման վարկերի բանկի և Եվրամիության հարևանության գործիքի (ԵՄ ՀՆԳ) աջակցությամբ 14.05.2014թ. կնքված ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 21.06.2014թ.: Վարկային միջոցների մասհանման վերջնաժամկետը վերանայվել և երկարաձգվել է մինչև 30.12.2025:
- **ԵԶԲԾ (YWIP)** - Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր, որն իրականացվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Եվրոպական ներդրումային բանկի (EIB) և ԵՄ Հարևանության ներդրումային ծրագրի (EU NIF) աջակցությամբ: EIB ֆինանսական պայմանագիրը ստորագրվել է 27.06.2014թ.-ին և ուժի մեջ է մտել 05.02.2015թ.: Ավարտման ամսաթիվը երկարաձգվել է մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը: ԵՄ NIF ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրվել է 06.08.2014-ին և ուժի մեջ է մտել 04.11.2014-ին: Ավարտման ամսաթիվը 31.12.2025թ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

• **Կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրերը ներառում են՝**

- ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 2093-Ն որոշմամբ սահմանված «Մինչև 2026 թվականը կառուցվելիք, կապիտալ վերանորոգվելիք կամ վերակառուցվելիք 300 դպրոց» ծրագրի 1-ին հավելվածում ընդգրկված դպրոցների և կրթական համալիրների կառուցման/վերանորոգման նախագծերի իրականացում՝ մասնավորապես այդ որոշմամբ ՀՏԶՀ-ին հատկացված դպրոցների համար:
- ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1581-Ն որոշմամբ սահմանված «Մինչև 2026 թվականը կառուցվելիք, կապիտալ վերանորոգվելիք կամ վերակառուցվելիք 500 մանկապարտեզներ և նախադպրոցական հաստատություններ» ծրագրի 1-ին հավելվածում ընդգրկված մանկապարտեզների շինարարական նախագծերի իրականացում՝ մասնավորապես այդ որոշմամբ ՀՏԶՀ-ին հատկացված մանկապարտեզների համար:
- Սյունիքի, Լոռու և Կոտայքի մարզերում արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցերի, օրական կարգավորվող երկու ջրամբարների և պոմպակայանի կառուցման ենթածրագրեր:
- Գեղարքունիքի մարզի Վարսեր բնակավայրի տարածքում Սևան քաղաքի կոյուղու կոլեկտորի վնասված հատվածի վերականգնման ծրագիր:
- Մարգադապրոցների և «Workout» տիպի մարզահրապարակների կառուցման աշխատանքներ ՀՀ տարբեր մարզերում:
- «ԱԵԲԱՅԻԱ» մաքրման կայանի սպասարկման համար պարեկային ծառայության ձեռքբերման ծրագիր:
- Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի պոլիկլինիկայի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման ծրագիր:

• **ՈԳԶՍԱՄ (IADAAM)** - <<Հայաստան – Ոռոգվող գյուղատնտեսության զարգացում Արարատի և Արմավիրի մարզերում>> ծրագիրը, որն իրականացվում է Ֆրանսիական զարգացման գործակալության (AFD) աջակցությամբ՝ 2020 թվականի ապրիլի 23-ի ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ոռոգման ոլորտում ընթացող բարեփոխումների իրականացման գործում՝ կենտրոնական և տեղական մակարդակներում կարողությունների զարգացման, ջրի կառավարման հանրային (մասնակցային) համակարգի զարգացման, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերություններին տրամադրվող սուբսիդիաների կրճատման միջոցով: Ծրագրի ավարտի ժամկետը վերանայվել և երկարաձգվել է մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 19-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և Մեկնաբանությունների (միասնական ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ):

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) Ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

ՀՀՄՍ 21.8 Արժույթը համարվում է փոխանակելի մեկ այլ արժույթի հետ, եթե կազմակերպությունը կարող է ձեռքբերել մյուս արժույթը որոշակի ժամանակահատվածում, որը թույլ է տալիս սովորական վարչական ուշացում, և շուկայի կամ փոխանակման մեխանիզմի միջոցով, որի դեպքում փոխանակման գործարքը կստեղծեր կիրառելի իրավունքներ և պարտավորություններ:

ՀՀՄՍ 21.19Ա Կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը չափման ամսաթվի դրությամբ, երբ արժույթը այդ ամսաթվին փոխարկելի չէ մեկ այլ արժույթի հետ (ինչպես նկարագրված է 8, 8Ա-8Բ և Ա2-Ա10 կետերում): Սփոթ փոխարժեքը գնահատելիս կազմակերպության նպատակն է արտացոլել այն փոխարժեքը, որով չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև տեղի կունենար կանոնավոր փոխանակման գործարք գերիշխող տնտեսական պայմաններում:

ՀՀՄՍ 21.57Ա Երբ կազմակերպությունը հաշվարկում է սփոթ փոխարժեք, քանի որ արժույթը չի կարող փոխանակվել մեկ այլ արժույթի հետ (տե՛ս կետ 19Ա), այն պետք է բացահայտի տեղեկատվություն, որը թույլ կտա իր ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին հասկանալ, թե ինչպես է արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու անկարողությունը ազդում կամ ակնկալվում է, որ կազմակերպության ֆինանսական ցուցանիշների, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա: Այս նպատակին հասնելու համար կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն հետևյալի մասին՝

ա. արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու անկարողության բնույթի և ֆինանսական հետևանքների մասին,

բ. օգտագործված սփոթ փոխարժեք(ներ)ի մասին,

գ. հաշվարկման գործընթացի մասին, և

դ. այն ռիսկերի մասին, որոնց կազմակերպությունը ենթարկվում է արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու անկարողության պատճառով:

ա) 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Հետևյալ փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար.

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններին ազդեցությունը» (Փոփոխություն))

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններին ազդեցությունը» (Փոփոխություններ): Փոփոխությունները պահանջում են գնահատել, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի հետ, և երբ՝ ոչ: Փոփոխությունների համաձայն կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը, եթե այն եզրակացնում է, որ արժույթը փոխարկելի չէ այլ արժույթի հետ:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվություններին վրա:

Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ՀՀՄՍ 8.30	Եթե կազմակերպությունը չի կիրառել հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած նոր ՖՀՄՍ, այն պետք է բացահայտի՝ (ա) այդ փաստը, և (բ) հայտնի կամ ողջամտորեն գնահատելի տեղեկատվություն, որը վերաբերում է նոր ՖՀՄՍ-ի սկզբնական կիրառման ժամանակահատվածում կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա դրա հնարավոր ազդեցության գնահատմանը:
ՀՀՄՍ 8.31	ՀՀՄՍ 8.30-ի համաձայն պետք է հաշվի առնել հետևյալ տեղեկատվության բացահայտումը՝ (ա) նոր ՖՀՄՍ-ի վերնագիրը, (բ) հաշվապահական քաղաքականության մեջ առաջարկվող փոփոխության կամ փոփոխությունների բնույթը, (գ) այն ամսաթիվը, նախքան որը ՖՀՄՍ-ը պետք է ընդունվի, (դ) այն ամսաթիվը, նախքան որը նախատեսվում է ՖՀՄՍ-ի սկզբնական ընդունումը, և (ե) կամ՝ (i) ակնկալվող ազդեցության քննարկումը, կամ (ii) եթե այդ ազդեցությունը անհայտ է կամ չի կարող ողջամտորեն գնահատվել, այդ փաստը:

(բ) Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍ-ի կողմից, որոնք գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք սակայն Հնկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

Ի պատասխան ՖՀՄՍ-ների մեկնաբանությունների կոմիտեին ուղղված հարցերին և իրագործումից հետո ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքների» դասակարգման և չափման պահանջների իրականացված վերանայումից բխող հարցերին՝ 2024 թվականի մայիսին ՀՀՄՍ-ն հրապարակեց ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ կատարված փոփոխությունները: Փոփոխությունները փոխում են ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի հետևյալ պահանջները:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում

Էլեկտրոնային փոխանցումների միջոցով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

- տոկոսային տարրեր հասարակ վարկային պայմանագրում (մայր գումարի վճարումներ և տոկոսների գնահատում – «SPPI թեստ»)
- Պայմանագրային պայմաններ, որոնք փոխում են պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ չափը
- Առանց ետընթացության իրավունքի ֆինանսական ակտիվներ գործառնություններով
- Ներդրումներ պայմանագրային կապակցված գործիքներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բացահայտումներ

- Ներդրումներ բաժնային գործիքներում, որոնք չափվում են իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով:
- Պայմանագրային պայմաններ, որոնք կարող են փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետը կամ գումարը:

Փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ այն հարցի վրա, թե ինչպես են կազմակերպությունները հաշվառում ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը և ինչպես են դասակարգվում ֆինանսական ակտիվները: Փոփոխությունները թույլ են տալիս կազմակերպությանը վաղաժամկետ ընդունել միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և հարակից բացահայտումների հետ կապված փոփոխությունները և կիրառել մնացած փոփոխությունները ավելի ուշ: Սա հատկապես օգտակար կլինի այն կազմակերպությունների համար, որոնք ցանկանում են վաղաժամկետ ընդունել փոփոխություններն այնպիսի ֆինանսական գործիքների համար, որոնք ունեն ESG (բնապահպանական, սոցիալական և կառավարման) կամ նմանատիպ բնութագրեր:

ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների տարեկան բարելավումներ

Տարեկան բարելավումները սահմանափակվում են փոփոխություններով, որոնք կա՛մ հստակեցնում են ՖՀՄՍ ստանդարտի ձևակերպումները, կա՛մ ուղղում են համեմատաբար աննշան անցանկալի հետևանքները, բացթողումները կամ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների միջև հակասությունները: Առաջարկվող բարելավումներն ամփոփված են մեկ փաստաթղթում: Տարեկան բարելավումների այս ցիկլը վերաբերում է հետևյալին.

- Հեջային հաշվառում առաջին անգամ որդեգրողի կողմից (Փոփոխություններ ՖՀՄՍ 1-ում՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրում)
- Իրական արժեքի և գործարքի գնի միջև հետաձգված տարբերության բացահայտում (Փոփոխություններ ՖՀՄՍ 7-ի իրականացման ուղեցույցում)
- Շահույթ կամ վնաս ապաճանաչման արդյունքում (ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Ներածություն և վարկային ռիսկի բացահայտում (Փոփոխություններ ՖՀՄՍ 7-ի իրականացման ուղեցույցում)
- Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ)
- Գործարքի գին (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ)
- «Փաստացի գործակալի» սահմանում (ՖՀՄՍ 10-ի փոփոխություններ)
- Ծախսերի մեթոդ (ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ):
- Վերջնական փոփոխությունները հրապարակվել են 2024 թվականի հուլիսին:

Պայմանագրեր, որոնք վերաբերում են բնությունից կախված էլեկտրաէներգիայի (նախկինում էլեկտրաէներգիայի գնման պայմանագրեր) (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

2024 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել բնությունից կախված էներգիայի պայմանագրերի ֆինանսական հետևանքների մասով կազմակերպությունների հաշվետվությունները բարելավելու նպատակով, որոնք հաճախ կառուցված են որպես էլեկտրաէներգիայի գնման պայմանագրեր (PPAs): Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերն օգնում են ընկերություններին ապահովել էլեկտրաէներգիայի մատակարարումը քանի որ արևային էներգիայի աղբյուրներից: Քանի որ այս պայմանագրերով գներացվող էլեկտրաէներգիայի քանակը կարող է տարբեր լինել՝ ելնելով եղանակային պայմանների հետ կապված անվերահսկելի գործոններից, ընթացիկ հաշվապահական պահանջները կարող են համարժեքորեն չարտացոլել, թե ինչպես են այդ պայմանագրերը ազդում ընկերության գործառնական արդյունքների վրա: Ի պատասխան՝ ՀՀՄՍԽ-ը նպատակաուղղված փոփոխություններ է կատարել ՖՀՄՍ 9-ում /Ֆինանսական գործիքներ/ և ՖՀՄՍ 7-ում /Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ/ ֆինանսական հաշվետվություններում այս պայմանագրերի վերաբերյալ բացահայտումները բարելավելու համար: Փոփոխությունները ներառում են.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

- «Սեփական օգտագործման» պահանջների կիրառման պարզաբանում,
- Հեջավորման հաշվառման թույլատրում, եթե այդ պայմանագրերն օգտագործվում են որպես հեջավորման գործիքներ, և
- Բացահայտման նոր պահանջների ավելացում, որը ներդրողներին հնարավորություն կտա հասկանալու այս պայմանագրերի ազդեցությունը ընկերության ֆինանսական գործունեության և դրամական միջոցների հոսքերի վրա: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Փոփոխությունների վաղ կիրառումը թույլատրվում է: Այնուամենայնիվ, որոշ իրավական համակարգերի դեպքում այս փոփոխությունները պետք է հաստատվեն նախքան դրանք կիրառելը:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

ՖՀՄՄ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում

- «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» ՖՀՄՄ 18-ը փոխարինում է «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՄ 1-ին և պարտադիր բնույթ է կրում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՄ 18-ը, որը հրապարակվել է ՀՀՄՄ-ի կողմից 2024 թվականի ապրիլի 9-ին, սահմանում է զգալի նոր պահանջներ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման համար՝ կենտրոնանալով հետևյալի վրա.
- Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը, ներառյալ պահանջները պարտադիր ենթագումարների համար, որոնք պետք է ներկայացվեն: ՖՀՄՄ 18-ը ներկայացնում է պահանջներ եկամուտների և ծախսերի հոդվածների համար, որոնք պետք է դասակարգվեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հինգ կատեգորիաներից մեկում: Այս դասակարգման արդյունքում ներկայացվում են որոշակի ենթագումարներ, օրինակ՝ գործառնական կատեգորիայի բոլոր եկամուտների և ծախսերի հոդվածների հանրագումարը, ներառյալ «գործառնական շահույթի կամ վնասի» նոր պարտադիր ենթագումարը:
- Տեղեկատվության համախմբում և տարանջատում, ներառյալ ընդհանուր սկզբունքների ներդրումը, թե ինչպես պետք է տեղեկատվությունը համախմբվի և տարանջատվի ֆինանսական հաշվետվություններում:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչներին (MPM) առնչվող բացահայտումներ, որոնք ֆինանսական կատարողականի չափումներ են՝ հիմնված ՖՀՄՄ-ներով պահանջվող ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի վրա համապատասխան ճշգրտումներով (օրինակ՝ «ճշգրտված շահույթ կամ վնաս»): Կազմակերպություններից կպահանջվի բացահայտել MPM-ն իրենց ֆինանսական հաշվետվություններում, ներառյալ MPM-ի համադրումը ՖՀՄՄ-ի ստանդարտներին համապատասխան հաշվարկված մոտակա ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի հետ: ՖՀՄՄ 18-ի նպատակն է բարելավել ընկերությունների գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների համեմատելիությունը և թափանցիկությունը: ՖՀՄՄ 18-ը նաև հանգեցրել է չնչին փոփոխություններին դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

ՖՀՄՄ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ

2024 թվականի մայիսի 9-ին ՀՀՄՄ-ը հրապարակեց ՖՀՄՄ 19-ը՝ «Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. բացահայտումներ»: Շահագրգիռ կողմերը դիմել էին ՀՀՄՄ-ին՝ խնդրելով թույլատրել դուստր կազմակերպությանը, որը հաշվետու է իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում ՖՀՄՄ կիրառող մայր կազմակերպության առջև, կիրառել ՖՀՄՄ-ներն իր սեփական ֆինանսական հաշվետվություններում բացահայտման նվազեցված պահանջներով: Ելնելով այս դիմումից՝ ՀՀՄՄ-ը իր հետազոտական պորտֆելում ավելացրեց մի նախագիծ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության դուստր ընկերությունների համար բացահայտման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

